ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ARMENIA

ARMENIAN CHESS FEDERATION

375025, Հայաստան, Երևան, Խանջյան 50
Հեռ. (374)10-554923, (374)10-570758
Ֆաքս. (374)10-570758, (374)10-272418
E-mail: armchess@arminco.com, armchess@armencell.com

50, Khandjian Str., 375025, Yerevan, Armenia
Tel: (374)10-554923, (374)10-570758
Fax: (374)10-570758, (374)10-272418
E-mail: armchess@arminco.com, armchess@armencell.com

April 11, 2006

His Excellency President Kirsan Ilyumzhinov:

In reference to the email we received dated April 3, 2006, I am writing to you in regards to the as-of-yet uncounted Category XVII and XI Karabakh International Tournaments held in October 2005.

As you mentioned, by virtue of our request, the current FIDE leadership is prepared to include this outstanding issue in the General Assembly agenda. To be honest and with all due respect, we feel that this issue should be included in the agenda regardless of our request. The current situation is the following: several of the world's top players successfully participated in a very high level international tournament, held according to all chess rules, in a transparent and proper atmosphere in Stepanakert in 2005. There was a high level of international coverage in dozens of western newspapers, countless websites, and the official trilingual homepage www.karabakh2005.com which has received over 80,000 visits to date. In every respect, it was a successful tournament: hard fought games, positive media attention, festive atmosphere, simultaneous matches played by the GMs against schoolchildren. The only sad repercussion of the event has been the pressure by forces which wish to undermine all the ideals that FIDE should stand for. As indicated in our previous correspondence, racist invective has no place in chess.

Tournaments such as the Karabakh 2005 event should be cherished by all. Events held anywhere in the world should be cherished which succeed in: popularizing the game of chess, raising funds and corporate sponsorship, creating necessary conditions befitting the top players in the game, including simultaneous matches against local young fans and students of the game, hosting the top players from a dozen countries. These are all the benchmarks we should all aim to achieve in organizing chess tournaments. Indifference to solving the problems artificially attached to such tournaments is not in the best interest of the game of chess. We feel a moral obligation to see these games counted official and the problem corrected in a just and moral manner. We share the opinion of many that the leadership of FIDE should solve problems like this on principles of morality, justice, and what is right for chess.

The outcry from the participants, representatives of the media, and from respective national chess federation leaders includes bewilderment, disappointment, and anger. These negative feelings of course do not reflect positively on the chess world, the overall atmosphere, and most specifically, on FIDE itself. In addition to its main responsibility to promote chess here in Armenia, the Armenian Federation is also committed to promoting chess worldwide. We see chess as a game without borders, and a game which can transcend any of the world's problems. We believe in the right of players to play chess freely and for organizers to provide fans around the world with professionally organized tournaments.

We look forward to hearing voices of reason and morality during the upcoming Congress, from the leadership, from the participants' countries, and from all those who aspire toward a better future.

With optimism and in the name of fairness,

Serge Sargsyan

President, Armenian Chess Federation

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ARMENIAN
CHESS FEDERATION

375025, Հայաստան, Երևան, Խանջյան 50
Հեռ. (374)10-554923, (374)10-570758
Ֆաքս. (374)10-570758, (374)10-272418
E-mail: armchess@arminco.com, armchess@armencell.com

50, Khandjian St., 375025, Yerevan, Armenia
Tel: (374)10-554923, (374)10-570758
Fax: (374)10-570758, (374)10-272418
E-mail: armchess@arminco.com, armchess@armencell.com

«11» «ապրիլի», 2006թ.

*Շախմատի միջազգային ֆեդերացիայի*
*նախագահ պարոն Կ. Իլյումժինովին*

Հարգելի պարոն Իլյումժինով,

Անդրադառնալով 2006 թ. ապրիլի 3 նամակին՝ ես դիմում եմ Ձեզ Ղարաբաղ – 2005 17-րդ և 11-րդ կարգի Միջազգային մրցաշարերի դեռևս չհաշվարկված արդյունքների վերաբերյալ:

Դուք նշել եք, որ ի պատասխան մեր խնդրանքի ՖԻԴԵ-ի ներկայիս ղեկավարությունը պատրաստ է ընդգրկել այս բաց հարցը Գլխավոր Կոնգրեսի օրակարգի մեջ: Ազնվորեն պետք է ասենք, որ մեր կարծիքով այս հարցը պետք է քննարկման առարկա դառնար և ընդգրկվեր օրակարգում անկախ մեր խնդրանքից:

Ներկայիս իրավիճակը հետևյալն է. աշխարհի մի շարք բարձրակարգ շախմատիստներ մասնակցել են 2005թ. Ստեփանակերտում տեղի ունեցած բարձր մակարդակի միջազգային մրցաշարերին, որոնք անցկացվել են շախմատային բոլոր օրենքների համաձայն՝ թափանցիկ և արդար մթնոլորտում: Մի շարք արևմտյան թերթեր, բազմաթիվ ինտերնետային կայքեր լուսաբանել են այս մրցաշարերը, իսկ պաշտոնական www.karabakh2005.com կայքը ունեցել է ավելի քան 80 000 այցելու: Այս մրցաշարերը գնահատվել են որպես կայացած բոլոր առումներով, քանի որ աչքի են ընկել լարված պայքարով, լրատվական միջոցների դրական գնահատմամբ, ջերմ տրամադրությամբ, գրոսմայստերների և դպրոցականների միջև կայացած միաժամանակյա խաղերով: Միակ տխուր փաստն այն է, որ որոշակի ուժեր ցանկացել են ձախողել այդ մրցաշարը՝ սրանով իսկ քայքայելով այն լավագույն գաղափարները, որոնց խորհրդանիշն է ՖԻԴԵ-ն: Ինչպես նշել ենք մեր նախորդ նամակներում, ազգային խտրականությունը չպետք է տեղ գտնի շախմատի ոլորտում:

Այս կարգի մրցաշարերը պետք է քաջալերվեն բոլորի կողմից: Շախմատն ավելի ճանաչված դարձնելը, այն հովանավորելու նպատակով միջոցներ հայթայթելը, լավագույն շախմատիստներին հյուրընկալելը և նրանց համար վայել պայմաններ ստեղծելը՝ ներառյալ միաժամանակյա խաղերի կազմակերպումը, բարձր գնահատականի են արժանանում ամբողջ աշխարհում: Մեր բոլորիս ջանքերը պետք է ուղղված լինեն հենց այս նպատակների իրագործմանը:

Նման մրցաշարերում տեղ գտած արհեստականորեն առաջացած խոչընդոտների հանդեպ անտարբերությունը չի բխում շախմատի շահերից: Մենք համարում ենք, որ այս հարցը շտկելու, արդարացի լուծման հասնելու բարոյական պարտականություն է դրված մեզ վրա: Կիսելով շատերի կարծիքը գտնում ենք, որ ՖԻԴԵ-ի ղեկավարությունը պետք է հարցին լուծում տա բարոյականության և արդարության գաղափարներից ելնելով:

Ղարաբաղ–2005 Միջազգային մրցաշարերի մասնակիցները, լրատվական միջոցների ներկայացուցիչները, հարգանք վայելող ազգային ֆեդերացիաների ղեկավարները իրենց խորին մտահոգությունն ու հիասթափությունն են հայտնում այս կապակցությամբ: Այս բացասական արձագանքները չեն կարող դրական ազդեցություն ունենալ շախմատային աշխարհի ընդհանուր մթնոլորտի վրա և, մասնավորապես, ՖԻԴԵ-ի վրա:

Հայաստանի շախմատի ֆեդերացիան իր հիմնական խնդիրն է համարում շախմատը զարգացնել Հայաստանում, բայց նաև խիստ շահագրգռված է նրա զարգացմամբ ողջ աշխարհում: Մենք գտնում ենք, որ շախմատը մի խաղ է, որ չունի սահմաններ և պետք է զերծ մնա աշխարհում գոյություն ունեցող բոլոր հակամարտությունների բացասական ազդեցությունից: Մենք համոզված ենք, որ շախմատիստներն ու կազմակերպիչները ազատ են իրենց ընտրության մեջ և կարող են մրցաշարեր կազմակերպել աշխարհի ցանկացած վայրում:

Մենք անհամբերությամբ սպասում ենք Ձեր՝ կազմակերպիչների, մասնակցող բոլոր երկրների և այն բոլորի արձագանքին, ովքեր ձգտում են լավ ապագայի:

Հանուն արդարության և լավատեսությամբ՝

Հայաստանի շախմատի
ֆեդերացիայի նախագահ՝

Սերժ Սարգսյան